

Unlabeled
51

51

616.9

6/6.9

4-38

2-38

ԲԺԻՇԿ Բ. ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆՑ.

(369)

№ 408

ԴԻՖՏԵՐԻՏ

$$= 87.78 \text{ t/m}^2$$
$$\begin{array}{r} 1003 \\ 10311 \end{array}$$

ԲՈՂԱԶԱՅԱՆԻ ԿԱՍ՝ ԲԳԱՑԱՆԻ ԴԻՖՏԵՐԻՏ ԿՈԶ-
 .ФонкфнТ.зdot егУ.А.тэSбНУ.ԿՀ զԿնեII онеловозеII

Բարեգործական նպատակով

Handwritten text: *Handwritten text in a Gothic script, likely a title or heading.*

Տպարան Ա. Ա. Միխեյսոնի

1879

2.312
85-3

16524

ՅԵՄԵՐԱՍՅԱՆԻ Ա ԴՅԻԿԻ

2473241

Дозволено Цензурою 19 Дек. 1879 года. Тифлисъ.

2857



58-2003

610

161-ՆԱ

ԲՈՂԱԶԱՅԱՆԻ ԿԱՄ ԲԿԱՑԱՆԻ

Դիֆտերիա կոչված տեսակը .

Քանի որ չը կայ մեր ազգի, ապա և մեր գրականութեան մէջ բժշկական և այլ գիտութիւններ, պարտք կայ մասնագէտ անձանց վրա որ նորա ժողովրդականացնեն գիտութիւնները, գոնեա մասամբ, մանաւանդ երբ այդ վերաբերում է այն մասներին՝ որոնք օրվայ՝ առաւել ևս կենաց և մահու հարց են դառնում: Խօսքս այս անգամ գիֆտերիա ցուի մասին է: Կոկորդացաւի այդ ամենաչար տեսակը զարեւով հնձել է և սաստկութեամբ շարունակում է հնձել զխաւորապէս մարդկութեան մատղաշ սերունդը:

Այս րօպէում, երբ ևս գրում եմ այս տողերը, այդ ցաւը զբոսնում է Ռուսաստանի զանազան անկիւններում և հիւսիսային Պետերբուրգում ու

հարաւային Ստաւրապոլում, Տփլիսն և մասամբ
վարակված է։ Կան ցաւերի շատ տեսակներ, որոնք
միշտ ունենում են գոյութիւն, բայց շատ
քաղաքավարի կերպիւ, խնայելով միշտ մարդկե-
րանց կեանքը, բայց որոնք յարմար դէպքերում
անխնայ կերպիւ կոտորում են մեծ բազմութիւն։
Ահա այդ տեսակ ցաւերին է պատկանում դիֆ-
տերիա և սաստկանալու ժամանակը այդ և իւ-
րանման ցաւերը ելնում են իրանց սահմանից և
արշաւում են միւս երկիրներ։ Գիֆտերիա մերթ
թոյլ և մերթ սաստիկ է տարածվում, մերթ սա-
կաւ, մերթ շատ է ուղանում։ Ահա այժմ Ստաւրա-
պոլում 100 հիւանդացածից 75 է գերեզման տա-
նում, այն ինչ Տփլիսում—36-ը։

Այս մի քանի խօսքերից տեսնում ենք, ուրեմն,
թէ ինչ թշնամու հետ դործ ունենք, երբ լսում
ենք դիֆտերիաի անունը։ Հայ ժողովուրդը, դո-
նեա թիֆլիսեցիք, երևանցիք և ալաշկերտցիք, կը
համարձակեմ կարծել որ և միւս անդերի հայերը
հասկացողութիւն չունեն այդ ցաւի մասին։ Տըփ-
խիսումը այժմ, թէ և շատ թոյլ, այնուամենայնիւ
կայ այդ ցաւը։ Աջ և ձախ հարցեր եմ լսում այդ
ցաւի բնաւորութեան մասին և այն այնպիսի ան-
ձինքներից որոնց մասին չէի կարծիլ թէ չը գիտեն
այդ։ Անցեալ տարին երևանի հայ և թուրք շա-

կիչները մոտրած չլիւծ էին մտածել՝ «Տէր Աս-
տուած անուամբ էին նորա», «էս ինչ չը տեսնուած
ցաւ էր, էս էլ մեր մեղաց պատիժն էր, անցկա-
ցած տարին պատերազմը՝ հիմի էլ էս անօրինակ
ցաւը»։ Ալաշկերտի զաղթականները մի առանձին
խորհրդաւոր կերպիւ էին ինձ մօտ բերում այդ-
պիսի հիւանդներին, որոնց թիւը բաղդաւորապէս
ուսկաւ էր, աչքները չօած, պեղած հիւանդի վրա
ցոյց կըրային, թէ՛ «վարկաւ, հանդա խիւանդ, է-
դոր բողաղացաւ մը կոխերա, ուտեր—մնացեր ա,
կը խեղդիէ»։ Ասկորդի դիֆտերիաը զխաւորապէս
երեսայնց ցաւ է, թէ և մեծերին էլ չէ խնայում։
2—8 տարեկանը, տահ դիֆտերիաի ընտրած հա-
ռակը։ 8—17 տարեկան հասակը համեմատաբար
շատ ազատ է, այդ ցաւից ինչպէս և մի տարեկան
հասակը և մեծ հասակը։

Գիֆտերիաը կարող է կպչել կլանի (գիլզակին,
բողաղին, կատկին) և կոկորդին (խրթլաւուկ),
աչքին, քթին, աղիքներին, և այլն, և արդէն պատ-
րաստ վէրքերին։ Մեր խօսքը կը լինի կլանի և
կոկորդի դիֆտերիաի մասին։ Գիֆտերիաը կազ-
մուածքի ընդհանուր ցաւ է և իր գոյութիւնը ար-
տայայտում է, ինչպէս տեղական ցաւ։ Կլանի
դիֆտերիաը սկսվում է հետեւեալ կերպիւ։ Վերջ-
ներք երեք տարեկան երեխայ, որ կարող է իր
բոլոր անդամները բայ ատրել։

Երեխան յանկարծ դողացնում է և ընկնում է տաքութեան մէջ. ջերմը կարող է սկսել և առանց դողի. Մի քանի ժամից կամ մի օրից յետոյ բողաղացաւ է զգում. թուքը կամ կերակուրը կուլ տալուց բողաղը ցաւում է, այդ ցաւը երբեմն ականջներին է խփում, ծակում է ամեն մի կուլ տալուց. բերանը լաց ես անում, գրգալով լեզուն ներքև հուպ տալիս, տեսնում ես որ փափուկ քիւրքը (զամաղը, լեզուակը, կաթիկը, նշախուլը) և կլանը (բողաղը) սաստիկ կարմրած են, ալ կարմիր և կամ մութ կարմիր են փոքր ինչ ուռած են, տեղ տեղը կարծես փայլում է ուռչելուց ու տեղ տեղ երևում է սպիտակ փառեր, գործարարի փառի պէս (ոտայն). բերանը սղողելուց կամ փափուկ մաղէ կամ թելով շինած վրձինով քսելուց, այդ փառերը չեն ոչնչանում, լակ ելծէ որ և իցէ կերպիւ ոչնչացնես այդ փառերը՝ չուտով. նոցա տեղը նորերը կը գտնես. Հէնց առաջին օրը ջերմը կարող է հասնել 39—40 և աւելի աստիճանի (բնականը 36¹/₂—37¹/₂) երեկոյեանները սուրբաբար ջերմը սաստկանում է. դիֆտերիաը կարող է լինել հեշտ կամ ծանր. Հեշտ տեսակը այսպէս կարող է սկսվել՝ երեխան ակործակը կորցնում է, թուլութիւն է զգում, խաղից ընկնում է, փոքր ինչ ջերմում է, կարող է և ոտքի

վրա, — կուլ տալուց բողաղումը ցաւ է զգում, այդ պատճառով զուլսը ցածրացնում է և երեսը կնճռոտում. բերանը բանալուց կը տեսնուի բողաղի զանազան մասերի վրա սաստիկ կարմրութիւն, տեղ տեղ գուցէ սպիտակ կէտեր, փառեր, ճնոտի (չանի) տակին խլեր են գոյաւում. Մի քանի օրից յետոյ երեխան կարող է առողջանալ, հետզհետէ փառերը վեր են թափվում, ջերմը պակասում է, երեխան ուժի է գալիս:

Դիֆտերիաի ծանր տեսակը երեխային խակոյն անկողինը կը ցցի, սաստիկ ջերմը, որի հետ միացած է հնչառութեան և սրտի դարկերի յաճախելը, թուլութիւն, գլխացաւ, ակործակի կորուստ — կուլ տալուց, աւելի կարծր բաների — սաստիկ ցաւ, ականջներումը ծակոց, ներքին ծնօտի տակին խլեր, ականջախուլի մեծանալը — ահա դիֆտերիաի սկիզբը: Բողաղի մասերի վրա նկատելի է կարմրութիւն, փառեր, որոնք սպիտակագոյն են, դեղնագոյն կամ մոխրագոյն, լեզուակը (ղիլակը) օրինակ հաստացած է, երկայնացած է, սպիտակ — դեղնագոյն կամ մոխրագոյն հաստ փառով, կարծես թարախով (ժանր, չէրք, դախ) ծածկված — նոյն դրութեան մէջ է և նշախուլը (լեզուակի) դիչակի կողքերին, և նրան չրջապատող վարագուրածն թաղանթները — ծնօտի տակի մեծացած

խելքը ձեռք տալուց ցաւում են: Եթէ հիւանդութիւնը սկսում է արագ քայլերով հիւանդին դէպի մահը տանել—չերմը սաստկանում է, դիֆտերիաով վարակված մասերը աւելի լցվում են, երբեմն, փտում, մեռնում և վերթափում, փառերը տեղ տեղ արնոտվում, մոխրի դոյն ստանում, ուռչում, փարթամանում, բողազը հետզհետէ նեղացնում, մի զրգալ ջուր կուլ տալն անգամ անկարելի է անում: Հիւանդը, նեղացած կոկորդով, նուազ օդ ստանալու պատճառաւ, սկսում է արագ շնչել, սիրտը սկսում է նուազել, երբեմն նուաղիլ իր թոյլ վարկերը յաճախեցնում է: Երեխան, արագ շնչելով, յոգնում է, իւրաքանչիւր շնչառութիւնը խզզալով, ֆստալով և խռռալով է լինում. կուրծքը մեծ ուժով աշխատում է, բարձրանում, ցածանում, երկխան մէկ մէկ հազում է, երբեմն սիրտ վեր ածում—փառերի մի մասը դուրս նետում—փոքր ինչ հանգստութիւն ստանում, ազատ չունչ քաշում ու ննջում և իր ծնողացը նոր յոյս պատճառում, բայց էլի մի ժամ, կրկին բուլէներ, երեխան ցատկում, աչքերը չռած, վախեցած, այս կողմն այն կողմն է ընկնում, քիթ ծակերը լայն բացած, բերանը նոյնպէս, ձեռքերով իր մօրը կաշոււմ, նոյն մահադուշակ նշանները նոր ուժով վրա են գալիս, օդը պակաս է. երեխան չը գիտէ

ուժ գիմլի, ինչ անի, խեղդվում է. փորձում է հազալ—կուել մահի հետ. բայց վերջապէս աշխատած, վատակած, գլուխը մի կողմն է քաշ անում, պառկում, սպռում է, կապտութիւնը չրթուէքը, քիթը, ականջի ծայրերը, կոպրերի տակն է բռնում. աչքերը, որ մինչ այժմ վախեցած էին, այժմ բացվում են անմիտ, լայն, իրանց սպիտակը ցոյց տալիս, սառչում. արագ շնչառութիւնը դանդաղանում է. եւ մի քանի խոր ու զփռար շնչառութիւն և երեխայի զիակը պատրաստ է:

Բայց մահի մի այլ տեսակը կայ, կրբեմն երեխան նստում է, բաւական ազատ շնչում, ուտել է ուզում,—ծնողքը չեն էլ զգում թէ մի քանի բուլէից յետոյ երեխայի սիրտը այնքան կը թուլանայ, որ կանգ կառնի և երեխան մեռած կը տեսնեն. Գիֆտերիտը $\frac{9}{10}$ դէպքում սկսվում է կրանումը, բողազումը և յետոյ փոխվում է կոկորդի (խրթլաւուկի) վրա:

$\frac{1}{10}$ դէպքում դիֆտերիաը նկատվում է միայն կոկորդի վրա:

Վերոյիշեալ մասերից՝ բողազից կարող է անցնել և քիթ մէջը, և բերանի և ընտերքի ու չրթուքների վրա: Հիւանդի բերանիցը այնպէսի դարչելի հոտ է փչում, որ ինքը հիւանդն է զգլում: Ամենասար-

սափելի տեսակը—կոկորդի (խրթլաուկ, բողազի խորունքը) զիֆտերիան է, որը մահացնում է այդպիսի դեպքերի $\frac{3}{4}$ մասը: Կոկորդի զիֆտերիաը իմացվում է զլխաւորապէս իր այն զօրութիւնով որով ազդում է բոլոր մարմնոյ վրա, նոյն տենղը, նոյն թուլութիւնը, ձայնի կտրվիլը և այլն, թէև բերանը բանալուց զուցէ և ոչինչ չը տեսնուի: Մահը պատահում է խեղդվելուց և կամ թոքերի ախտից, որ նոյնպէս վարակվում են զիֆտերիայի մի տեսակով: Գիֆտերիայը մասամբ ցաւի սկզբումը, մասամբ վերջերումը և ըստ մեծի մասին բոլորովին անցնելուց մի ժամանակ յետոյ վրայ է բերում անդամաւորութիւն (paralysis, параличъ) սկսած կլանի և կոկորդի մկանունքներից և հասնում է չնչառութեան, պարանոցի, աչքի մկանունքներին, նաև ձեռք ու ոտքերին և մարմնոյ ընդ: Հիւանդը, զօրօրինակ, բան ուտելուց չէ կարողանում կուլ տալ, կերակուրը չնչափողն է ընկնում, հագնում. կամ հիւանդի գլուխը վրէն չի մնում, ծովում է այս կամ այն կողմը և կամ հիւանդը չլանում է, կամ չէ կարողանում ընթանալ և այլն և այլն:

Այժմ տեսնենք թէ ինչ նախապաշտպանութիւններ պէտք է գործ դնել, որպէս զի ազատ մնալ այս սոսկալի ցաւից: Նախ քան զրա վրա խօսելը

պէտք է ասել, որ զիֆտերիա առաջ բերող նիւթի կամ թոյնի էութիւնը մեզ յայտնի չէ.—հաւանական է որ նա առաջ է գալիս անմաքրութիւնից, աղտոտութիւնից, որովհետեւ օրգանիքական մարմինների լուծուածքից և իր զոյութիւնը առնում: Ահզ բաւական յայտնի է զիֆտերիայի թոյնի մի տեղից միւս տեղ փոխվելու ձևը, այսինքն հիւանդութեան տարածվելու ձևը: Գիֆտերիայը տարափոխիկ է, որովհետեւ այն նիւթերը, որոնք պարունակում են այդ ցաւի թոյնը թեթեւաչափ են, իսկ ինքը թոյնը բաւական ապրուկ և ներգործելով մարդոյ կազմուածքի այս կամ այն մասի վրա, առաջ է բերում նոյնանման ցաւ: Արդ որ զիֆտերիայը կոկորդի զանազան մասների վրա ներգործել է աւելէն և վարակել նոցա (զիֆտերիայով վարակվում են և կաշուի վրա պատահմամբ գտնուած վէրքերը), նա արգէն այդ բոպէից տարափոխիկ ցաւ է.—հիւանդի չնչառութեան յամանակը օդի հետ գիֆտերիայի թոյնի մասնիկները, երևելով կարող են ցաւը փոխել միւսների վրա և կամ մեր նկարագրած զիֆտերիայի փառերը, որոնք թքելուց կարող են վերթափել, այդ փառերը կամ անմիջապէս ընկնելով առողջի աչքը, քիթը, բերանը կարող են հաղորդել նրան ցաւը և կամ, ընկնելով թաղկնակի կամ տեղաչորի վրա, կարող են այնուհե-

տե՛ն չորանալ, փոշիանալ և, օղի մէջ անցնելով,
նոյնողէս հաղորդել այդ ցաւը առողջներին:
Հիւանդին համբուրելուց, վերջապէս կարելի է
փոխվել: Հիւանդի զրգալը, լաժակը դորձ դնելուց
կարելի է փոխվել:
Գիֆտերիտի թոյնը ամբարն ապրուել է, որ մի
տեղից կարելի է տանել միւս տեղը և մի քանի
ժամանակ պահելուց յետոյ՝ կարելի է նրանից դիֆ-
տերիտ առաջացնել: Եթէ ընտանեաց մէջ մէկը
հիւանդանում է, ի հարկէ, շատ անգամ պատահում
է, որ ընտանեաց մէջ մէկից միւսը — միւսից եր-
րորդը, նրանից չորրորդն է հիւանդանում: Գիֆ-
տերիտի մեծածի չորերը ծախելով կամ ուրիշ տեղ
վտխադրելով՝ կարելի է ցաւը այլոց վրա տարա-
ծել: Արդէն ասացինք, որ դիֆտերիտը չէ խնա-
յում ոչ մի հոտակ: Բայց ըստ մեծի մասին դրանից
սիրուած հասակն է 2—8 ամեանը: Հարուստները
համեմատաբար խնայուած են այդ ցաւից:
Աղքատ կեանքը պարունակում է իր մէջ խո-
նար, նոյնողէս և աղտոտ ընակարան, նեղուածք,
այդ պատճառաւ և բոլոր հիւանդութիւնները ա-
ւելի ստէպ են այցելում աղքատների տները, խո-
թոյլ, հիւանդոտ կազմուածքը համեմատա-
բար հեշտ է հիւանդանում դիֆտերիտով, ինչպէս
հաւ ուրիշ ցաւերով: Կան երեխայք, որոնք մինչ

իրանց հասակն առնելը մի առանձին հակումն ու-
նեն դէպի բողաղացաւր: և ահա կարծւում է, թէ
այդպիսի երեխայքը աւելի շուտով կարող են վա-
րակվել դիֆտերիտով: Հասկանալի է այսուհետեւ,
որ թոյլ, հիւանդոտ, ծծմեռ, հերքոտ երեխայքը
թէև հարուստ գերդաստանի պատկանէին նոքա,
դիֆտերիտի առաջ մի դին ունեն: Միշտ նկատ-
վում է դիֆտերիտին վերաբերեալ մի առանձին
յատկութիւն ևս, որ ունի իր հասկանալի պատ-
ճառները, այդ է՝ երբ այդ ցաւն ընկնում է գլի-
ցուք մի մեծ քաղաք, մի տան մէջ հիւանդացում
է մի քանիսին, յետոյ փոխվում է հարեանի տունը:
Բայց յանկարծ հիւանդութիւնը երեւում է քաղաքի
մի հեռու ծայրումը: Անցեալ տարի օրինակ Երե-
ւանումը հիւանդութիւնը երեկց թուրքերի թաղու-
մը և յանկարծ թուաւ Կոն դը լ, յետոյ անցաւ
քաղաքի կենտրոնը:

Այս տարի թիֆլիսումը դիֆտերիտը երեաց
Կուկիա, յետոյ հետզհետէ Սոլոակ, յետոյ Վերա,
յետոյ Հայոց Բազարը, որ համեմատաբար կենտրոն
է քաղաքի: Որքան բնակարանը խուփ է, օդափո-
խութիւնը պակաս, տեղի նեղութիւն, բայց բնակ-
չաց բազմութիւն, որքան երկայն լինի հիւանդի
հետ ունեցած յարաբերութեան ժամանակը, քանի
առաւել լինի անմաքրութիւնը, այնչափ և այնչափ

առ առել և հեշտ ցուցանել կարող է դիֆտերիա
իր զօրութիւնը:

Գիֆտերիա լուակաճ, ժամանակ վարակած լի-
նելով կազմուածքը՝ կարող է և աղիքները վարա-
կել, այն ժամանակ հիւանդի արտաթորութիւնը
նման է այն ցաւին, որ կոչվում է նրոց—մի տե-
սակ լորձմուռք և արիւն, և իսկապէս էլ այդպէս
է նրոցի մի այդ տեսակը *), թէ և անկախ դիֆ-
տերիա բողազացաւից—նոյնպէս դիֆտերիա է,
միայն թէ աղիքների:

Ուրեմն ինչ զգուշութիւններ պէտք է գործ
դնել դիֆտերիայի նախապաշտպանութեւ համար:
Մաքրութիւն—փտող բաներից ազատ մնալ—բու-
սեղէն է այդ, թէ կենդանեղէն.—արտաքնոցները
մաքուր պահել և հեռու չիւնել ջրհորներից, աղբիւ-
րներից, ջրկուտներից, խոնաւութիւնից ազատ պա-
հել ընակարանը,—դիֆտերիայով վարակուած հի-
ւանդին բ ո լ ո թ յ ի ն և ա ն պ ա յ մ ա ն անջա-

*) Բժշկական գիտութեանը յայտնվել է, որ ամեն
անգամ երբ արտաթորութիւնը պարունակում է իր
մէջ լորձմուռք, թարախ և կամ դրանց հետ և ար-
իւն, հիւանդութիւնը անպատճառ չը պէտք է
կոչել դիֆտերիաական նրոց այդ նշաններով կա-
րող է լինել և հասարակ բողազական նրոց՝ Ka-
tarrrhальная и дифтеритическая дизентея.

տել,—ըստ մեծի մասին միւս երեխաներից, և ա-
ռանձին սենեակ դնել—նրա թուքը, խլինքը և ա-
մեն արտաթորութիւնները հաւաքել առանձին շո-
րերի մէջ. ինչ որ կարելի է այրել—լաւ է այրել,
ինչ որ չէ, խոր թաղել հողի մէջ և երեսանց կիր
ածել, ու նորից հողով ծածկել. հիւանդին մօտիկ
չունչ չառնել, բերանը և քիթը նրա բերնի և քթի
դէմը չը բռնել—մի փռշտալով, մի հազալով վա-
րակուածը կարող է դիֆտերիա արժանացնել:
Հիւանդի կերակրի անոթները առողջների համար
գործ չը դնել: Սննեակի օղը մաքրել, փոխել—
հէնց մի փոքր լաւ հղանակ լինի թէ չէ—(մրսե-
լուց զգուշանալ) լուսամուտները բանալ. մեռա-
ծին չը համուրել—նրա զգեստը չը պահել, ոչն-
չացնել: Դիակը եկեղեցի չը դնել, այլ խկոյն և
չուտով տանիցը վերցնել գերեզմանատունը տա-
նել—խոր թաղելուց յետոյ, նախ չը մեռցրած կիր
ածել զազաղի վրա և յետոյ հողով ծածկել: Տունը,
մանաւանդ հիւանդի սենեակը մաքրել, եթէ դի-
զայու տունը հողէ յատակ ունի, երեսանց հողը
վերցնել դուրսը թաղել, իսկ տան յատակը նոր
հողով ծածկել:

Եթէ ցաւ սկսում է փոքր ի չատէ սաստկանալ,
քաղսքի կամ զիւղի հասարակութիւնները պէտք է
իրանց հոգսը քաշեն: Բաւական չէ սպասել կա-

աւարութեան հոգատարութեանը և կամ նրա հրամաններին՝ միասին ժողովուն և հարկաւոր եղած կարգադրութիւններն անեն: Այն տների վրա, որոնք բուն են դարձել զիֆտերիտի, մեծ ուշադրութիւն դարձնեն — նրանց մաքրեն, չը լինի թէ հասարակական խմելու ջուր անցնի այն տներովը (ինչպէս այդ Երեսնուամեայ թուրքերի թաղիցը, նրանց տներիցը մտնում էր և ցարդ մը տնում է հայերի համար խմելու ջուր): Գիֆտերիտով վարակուած գերդաստանի հետ իրանց գալ, գնալը կտրեն, եթէ զիֆտերիտը, ինչպէս պատահում է, յամառութեամբ կպչու՛մ է մի տան, քանզի, եթէ հնար է, այրել այդ տունը: Մեծ ուշադրութեան արժանի հարց է այս ցաւը ուսումնարանների վարչութեանց համար, նրանք սուր աչքով պէտք է դիտեն ցաւի սկիզբը, նրա շարժումը և ամեն մի յարմար դէպքում հարկաւոր եղած նախապաշտպանողական բերանացի կամ եթէ հնար է գրաւոր խրատներ տալուց յետոյ, — ուսանողներին արձակեն: Ուսումնարանի դռները քանի բաց մնան, այնքան դասատուները առաւել ևս կը դարդակուին: Երբ հարցը կենաց և մահու է, լուսաւորութեան զաղափարով սաստիկ գրաւելը վնասակար է և միանգամայն փարխեցութիւն:

Բայց երբ հիւանդութիւնը կպչում է՝ երեխային — ինչ պէտք է արած: Եթէ բժիշկ կայ, իսկոյն բժշկին պէտք է դիմած: Այո, այս այն հիւանդութիւններից մէկն է և կարող կամ ասել առաջինն է, ուր բժշկին մի ժամ յառաջ զիմելը կեանք և մի ժամ յետոյ զիմելը մահ տուել է: Բայց յօդուածիս նպատակը դնելով այն թէ, հասկացողութիւն տալ մեր ժողովուրդին զիֆտերիտ անած բողազացաւի վրա արդի բժշկական գիտութեան հայուածքներով, լրիւ կատարած չէի լինիլ իմ պարտքը ժողովրդի առաջ եթէ հիւանդութեան պատկերի նկարագրութեան հետ զւանայի ցոյց տալ և մի քանի բժշկական պարզ միջոցներ, մահաւանդ գործնականապէս գտնուած լինելով ժողովրդի մէջ նոյն այդ ախտի տարածուելու ժամանակ և իմանալով մի կողմից ժողովրդի կամ զալլաքներին և կամ պառաւաններին զիմելու թուլութիւնը և հաւատ չընծայելը բժիշկներին, կամ այս վերջիններին զիմելը միայն այն ժամանակ, երբ անգամ սրբերն էլ երես են դարձրել հիւանդից — այդ մի կողմից և միւս կողմից այն թէ, որքան պակաս է մեր ժողովրդի մէջ անգամ ամենապարզ տարրական հասկացողութիւնները կանոնաւոր բժշկութեան վրա: Մի հասարակ օրինակ՝ հիւանդը աչխատում է մի տեսակ առանձնանալ բժշկի հետ

և երբ իր նպատակին հասնում է, երեսը ծածկու-
տելով, կարծես մի մեծ ողորմութիւն խնդրելով
զբոխի, ասում է՝ — ծարաւու պապակիցի, հրա-
մայր որ ինձ ջուր տան, ես մեռայր և այն և
այն...

Յօդուածս գրած է ժողովրդի բանիմաց սնահա-
տերի համար, ուրեմն նա կարող է պարունակել
իր մէջ միայն այն, ինչ որ մատչելի է նրանց. ամ-
բողջ յօդուածի վրա ես այդ աչքով եմ նայել:
Գիֆտերիտ ստացած հիւանդին օգնել կը նշանակի
նրա ջերմը պակսեցնել, նրա ուժերը պահպանել,
գիֆտերիտի թոյնը ոչնչացնել արեան մէջ. բայց նախ
և առաջ նրա կլանը կամ կոկորդը, կամ բերանը
ազատել, մաքրել այն փառերից, այն սպիտակ,
կամ դեղնագոյն և կամ մոխրագոյն կէտերից, ո-
րոնք սկիզբն են գիֆտերիտի:

Ձը թողնենք և այն, որ երբեմն և շատ անգամ,
հիւանդները մեռնում են միմիայն նրանից որ կո-
կորդը մեքենայաբար այնքան նեղանում է, որ
օղը մուտք չէ գտնում դէպի թոքերը. ուրեմն
բժշկութեան մի կենսատու շնորհն էլ պէտք է լինի
հիւանդին ազատել այդ սարսափելի բոլորէից:

Հիւանդի բերանը մաքուր պահելու համար հար-
կաւոր է օղողել բերանը աղաջրով առնելով կէս
թէյի զրգալ աղ և լուծելով մի թէյի բաժակ ջրի

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
7/31 1922
17 —

միջոցով — ողորմութեամբ փրկանգամ — օղողել ոչ միայն
բերանը, այլ և զուգարը (gargariser): Լաւ է նոյն բանը
անել օրական դոնեւ չորս անգամ և թոյլ օղիով:
— Խրաքանչիւր երկու ժամ բերանով ներշնչել եռ-
ման (եփող) ջրի գոլորչիւր: Դրա համար կարելի
է յարմարեցնել որ և է անօթ, — բայց կրպակնե-
րում կամ դեղաթնկերում ծախու կան այդ դէպքին
յարմարեցրած անօթներ, որոնք գոլորչիւրը հեռու
շնչափողի և անգամ թոքերի խորունքն են ցնցում
(ингаляционные аппараты): Ամենահասարակ և ձե-
ռնաուր են Զիգլէի գործիքը և Dampf—Hidro-
conion Բերգսոն—Լեվինի: Այդ տեսակ հեղուկը
գոլորչիւրով ցնցող գործիքների (որոյ փոխացուցիչ
գործիք են կոչում — pulverisateurs des liquides)
միջնորդութեամբ, կարելի է և զեղ գործ դնել — վերց-
նել, զորօրինակ կէս թէյի զրգալ աղ, կամ նոյն-
չափ սօդա (այն սօդան, natrum bicarbonicum, որը
գործ է գրվում կիսալատի հետ և որը ծախ-
վում է կրպակներումը) հացնել մի բաժակ ջրի
մէջ և գործ դնել: Մեքենան այնպէս է շինած,
որ գոլորչիւրը ցնցում են ջուրը, որի մէջ դեղն է
հալցրած, իսկ հիւանդը բերանը բացած և գործի-
քին մօտիկ նստած չունչ է առնում: Շնչառու-
թիւնը մի քառորդ ժամ պէտք է տեւի — և իւրա-

(1003)
(1031)
57-2003



քանչիւր երկու ժամ պէտք է կրկնուի: Հէնց սկզբումը երբ որ ցաւը յայտնուեց, պէտք է տալ քինայ (chininum sulphuricum — քինայ — քինայ): 1—2 տարեկան երեխաներին 3 գրան (ցարնաչափ) օրական 3 անգամ: 3—5 տարեկաններին 5 գրան, օրական 3 անգամ: 6—10 տարեկաններին 6 գրան օրական երեք անգամ: 11—15 տարեկաններին 8 գրան օրական երեք անգամ: Մեծահասակներին 10 գրան օրական երեք անգամ:

Պարտ է համարում աւելացնել, որ յիշեալ չափերից աւելի և աւելի էլ կարելի է անվտանգ տալ, իսկ երբեմն մեծ չափերով տալը անհրաժեշտ է: Քինայի բժշկարար ներդրութիւնը այնչափ ազդեցիկ է—կազմուածքի վրա, մանաւանդ զիֆտերիաում, որ երբ այդ ցաւի օկիզը կարծվում է, բայց կտկածվում, աւելի լաւ է տալ քինայ, քան թէ չը տալ:

Չեմ կարող չը դարձնել ընթերցողի ուշադրութիւնը և մի զօրեղ միջոցի վրա, այն է հիւանդներին սառը չարսաւով փաթաթելը: Երբ ջերմը սաստկանում է և երեխան համարեա անզգայ ընկած է, պէտք է վերցնել սաստիկ սառը ջրում (սառցով եթէ հնար է) թրջել երկու չարսաւ, բոլորովին սկիտապրած երեխային փաթաթել աւազուկաւոր մզած չարսաւի մէջ և, երեք բո-

պէից յետոյ հանելով, խփոյն փափաթել երկբորդ չարսաւի մէջ, որ արդէն թջրված էր և աւազուկաւոր մզուած և այսպէս չարսաւիել գոհաց հինգ անգամ: յետոյ վարմինը սրբելով երեխային թեթեւ ծածկել, իսկ գլխին չարսաւի սառը շորեր դնել և շուտ շուտ փոխել: Սառը չարսաւներին մէջ փաթաթելը օրական երկու կամ երեք անգամ պէտք է կրկնել: Վզի վրա միշտ պահել ջերմացուցիչ կապանք (compresse echau-fante—согревающій компрессъ), առնելով քաթան չորս ծալ ծալել, թրջել սառը ջրի մէջ, լաւ մզել և փաթաթել վիզը, դրա վրա դնել ֆլանել կամ շալեղէն, յետոյ մուշամբայ, կամ կլեծեկայ, այն որ սեղանների երեսն են քաշում և կամ դեղատնից վերցնել առանձին, բարակ դրա համար իսկ պատրաստած կտոր և այդ բոլորը թաշկինակով կապել, իւրաքանչիւր չորս ժամը մի անգամ փոխել, այսինքն քաթանը սառը ջրում թրջել, մզել, իսկ մնացածը իր կարգովը կապել:

Եթէ հիւանդի կոկորդը նեղանում է և հիւանդը խախուռւմ, երկում է որ կոկորդը, կամ կլանի յետին պատերը, կամ շնչափողը լի է փառերով, լորձուքով, կամ թարախով, պէտք է տալ փախեցնող, սիրտ վեր բերող փոշի—рвотный порошок, և կամ դրգալի ծայրով այնքան գո գրել կլանը (մտաւ



տալ) որ հիւանդը փոխի նոյն այդ դրութեան մէջ, մանաւանդ երբ հիւանդը քնկում է, թոյլ է և հազաւ անգամ չը դիտէ—չափ օգնում է մի երկու փարչ (անօթ է) շատ սառը ջուր տնկելը բարձրից տկորացրած հիւանդի դիտին, այնպէս որ դադարից սկսուել և անցնի ծոծրակովը և մէջքովը: Դրանից հիւանդը ուշքի է գալիս, սթափում է քնից և հազում ու այդպիսով օդի ճանապարհները մաքրում են: Գալով հիւանդի պահելու ձևին, ներելի լինի ինձ կրկնել այն, որ անհրաժեշտ է՝ բաժանել, առանձնացնել հիւանդին միւս երկխաներից—սննհակի օդը մաքուր պահել, նրա անկողինը օրական մի քանի ժամ փակել բայց օդում—դուրսը: Նրա բոլոր արտաթորութիւնները այրել կամ հողի մէջ խոր թաղել—և նոյն իսկ հիւանդին նայեցող—հոգատարին խորհուրդ ևմ տալիս շատ անձնազօտութիւնից իրան ազատ պահել և միշտ զգոյշ մնալ վարակվելուց: Կերակուրը պէտք է լինի գլխաւորապէս ջրալի և ոչ կոշտ: Սառը ջուրը երբեք չը խնայել հիւանդից: Գոյ կաթ խմեցնելը օգտաւէտ է, թէյը, սուրճը, լիմօնի ջուրը, զելթերի ջուրը նոյնպէս: Անհրաժեշտ պէտք է տալ հիւանդին մսի ջուր (бульон): միսը շատ վերցնել, ջուրը սակաւ և աղը պակաս չանել: Ոստոցրած մսի ջուրը բաժակով կարելի է չարունակ տալ: Առհասարակ

այսպիսի հիւանդները պէտք է ստէպ ստէպ, բայց փոքր առ փոքր ուտեն:

Երբ հիւանդը թոյլ է—երակները թոյլ են գրցում—նշանը վատ է—սրտի զարկերը հետզհետէ կորցնում են իրանց ուժերը և սիրտը կարող է խոլառ դադարել գործելուց, ահա յարմար ժամանակ գործ դնելու կօնեակ: 3—4 տարեկան երեխային անգամ օրական կարելի է տալ և պէտք է տալ չորս հացի դրդալ կօնեակ: Կօնեակը երկխանցը սիրեցնելու համար, կարելի է չաքարաջրի կամ մուրաբաջրի հետ խառնած, առնելով մի կօնեակ երկու չաքարաջուր: Կօնեակի հետ, կամ առանձին, պէտք է տալ ուժեղ գինիներ՝ Տոկայի գինի, սորալէյն կամ, բորդօ կամ լաւ մաքուր և ին կրեանու կամ կախեթու գինի: Գինին տալը, բաւականաչափ քանակութեամբ միշտ օգուտ է թէ հիւանդութեան սկզբում, բայց թէ մանաւանդ նրա սաստկութեան ժամանակը և նոյնպէս վերջերում: Նոյն իսկ կազմուածքը ամրացնելու մտքը հիւանդութեան վերջանալուց յետոյ գինու հետ կարելի է տալ և քինայ, բայց փոքրագոյն չափերով՝ երկու գրան, օրական երկու անգամ: Այդպիսի ամրացնող, կազդուրող նիւթեր հարկաւոր է տալ հիւանդին, որովհետեւ դիֆտերիտից յետոյ համարեա միշտ յառաջանում է թուլութիւն, անդա-

մալուծութիւն և արեան պակասութիւն, որոց բը-
ժշկելու առաջին պայմանն է ամրացնող միջոցնե-
րը: Ինձ մնաց խօսել այժմ երկու ամենազօրեղ
միջոցների վրա՝ որոց մէկը ամենազօրեղ մահաբեր,
իսկ միւսը ամենազօրեղ կենսատու միջոցն է, կամ
գոնեա հիւանդի և հիւանդատիրոջ վերջին յոյսը:
Առաջին միջոցը մեր ժողովրդի սիրածն է, իսկ
երկրորդը բժշկական գիտութեան: Եւ նպատակն
է համոզել ժողովուրդը ձեռք վերցնել իրա սիրած
ձիշտ մահաբեր միջոցից և հաւատով դիմել բժշ-
կական հերոսական փրկարար միջոցին:

Խօսքս մի կողմից արին առնելու և միւս կող-
մից չնչափողահատման (Tracheotomia) — tracheo-
tomi վրա է:

Ի՞նչ ցաւ կայ, որ բժշկելու համար մեր ժողո-
վրդի առաջին և վերջին զօրեղ միջոցը չը լինի
աարին թողնելը: Մեր ժողովրդի հասկացողու-
թեամբ ամեն ցաւ առաջ է գալիս երեք պատճա-
ռից. առաջինը մի սեւեւ ց — այդ, եթէ կարելի
է այսպէս անուանել, տաք ցաւերն են՝ սաթխամ,
վարդահիւանդ, բողազացաւ և այլն. երկրորդ. քա-
մուց, կողքի ծակոց, գլխացաւ (բուխար), ճոռն-
րի ցաւ (յօղացաւ) և այլն, երրորդ. ճէւրք՝ բա-
րակացաւ, արեան սակաւութիւն և այլն: Մնում
է ևս ցաւոց մի շարք, որոց պատճառը հետաքրք-

բիր չէ ժողովրդին: Առաջին տեսակը համարեա
միշտ, բայց երկրորդը երբեմն տեղիք են տալիս
արին թողնելու: Արին թողնելը երկու տեսակի է
բաժանուիւմ թէ ժողովրդի և թէ բժշկականութեան
մէջ՝ ընդհանուրի, երբ երակն (բաղանդանի) կամ
զարկերակն են (ջիգեսուր զանի) բանում, կամ տե-
ղական՝ տղրուկ (սուլուկ, ծուրբէլայ) կպցնելը և
կամ պող (կոտոշ) կպցնելը և յետոյ թրաշել կըտ-
րատելը (թրաշելը): Ահա այդ վերջին տեսակին է
որ ժողովուրդը միշտ դիմում է դիֆտերիա բողա-
զացաւի ժամանակ՝ զխաւորապէս տղրուկ են
կպցնում: Արդէն նրանցուց քաջ յայտնի է, որոնք
իմ ժամանակը ամառողութիւն են ունեցել կորց-
նել իրանց սրղոցը, թէ ինչ ձիշդ մահացու մի-
ջոց է տղրուկ կպցնելը չանատակին դիֆտերիաի ժա-
մանակ: Բայց այդ ինքն ըստ ինքեան հասկանալի
է՝ եթէ մտաբերենք թէ արեան կորցնելը ինչ սար-
սափելի անզօրութիւն է պատճառում մարմնոյն, ան-
զօրութիւն և հետեւաբար սրտի զարկերի թուլու-
թիւն, որ ամենասարսափելին է հիւանդի համար, մի
կողմն թողնելով և այն, թէ տղրուկների ծակած
տեղերը իրանք են վարակուիւմ դիֆտերիայով:

Բայց ինչ պէտք է արած, երբ արդէն սպառած
բոլոր բժշկական զեղօրէից քսակը, հիւանդը կամ
սաստիկ կերպիւ տանջուիւմ է, վախեցած այս

կողմ այն կողմ ընկնելով, կամ անկողնումն ընկած, աչքերը կուլ տուած, կատարած — և վերջին շնչառական ուժերը կորցրած, ըստէ առ ըստէ վերջնական շնչին է սպասում, բայց և բխշկը այնչափ աշխատելուց և յետաձգելուց յետոյ կոկորդի նեղութիւնը չը կարողացաւ նորան խալառ. քնջել, երբ այժմ մահն անդառնալի տեսնելով, կանգ է առնում, ձեռքերը կուրծքին ծալած և հիւանդի երեսին է նայում: Ի՞նչ արած: Պէտք է կտրած շնչափողն, (բժշկի ձեռքով), պէտք է ծակել անմիջապէս կոկորդից ներքեւ և այդ դէպքի համար յարմարեցրած խողովակը դնել և այսպսով ազատ շունչ տալ հիւանդին, այնուհետեւ մահը յետաձգելով, կարելի է լինում և լիակատար կեանք տալ հիւանդին: Բայց քանի և քանի դէպքում եմ այդ առաջարկել երեանցուց, իբրեւ վերջին բժշկական կենսատու միջոց և նրանք միշտ և միշտ մերժել են: Պէտք է աւելացնել, որ քանի շուտ դիմել այդ միջոցին, այնքան աւելի մեծ յոյս կայ կեանքը ազատել մահից և հակառակը: Ներքի ինի ինձ ներկայացնել ընթերցողներին մի վիճակագրութիւն (Krönlein-Diphtheritis und Tracheotomie—Archiv, für klinische Chirurgie 1877, Band XXI) Բերլինի Թագաւորական հիւանդանոցի բժիշկ Կրենլէյնի. շնչափողահատումն (тра-

хеотомія արած է 504 հիւանդի, որոնցից ապրել են 147-ը: Այդ թուումի քանիսներին համարեա մեռած տեղն է արած օպերասիօնը: Տեսնում եմք որ այս դէպքում մահը կամեցաւ խել կեանքիցը ամբողջ 504 առողջ մարմին, բայց բժշկի հնարագիտութիւնը մահիցը յետ խլեց 147 հոգի: Ուրեմն դիֆտերիա ցաւի թէ առաջին և թէ վերջին բուժանքումը պէտք է դիմել բժշկի:

Բ. Նաւասարդեան

Ի 21 նոյեմբ. 1879 ամի

Թիֆլիս.



Երևանի մարզի 405 համայնական
 147-րդ համայնականի համայնական
 և 147-րդ համայնականի համայնական
 147-րդ համայնականի համայնական
 147-րդ համայնականի համայնական
 147-րդ համայնականի համայնական
 147-րդ համայնականի համայնական

Երևանի մարզի 405 համայնական

1878 թ. 25 հունիսի
 Երևանի մարզի 405 համայնական

ՀՀ Ազգային գրադարան



NL0585880

